Հոկտեմբ. վերջին. և յերեկոյին կատարեալ զնախատօնակն ամենից սրբոց, եղև յանկարծակի հոգէվար, զոր քահանայքս օծեցաք և ի հինգերորդ ժամու աւանդեաց զիւր հոգին։

Յետոյ նոյեմբ. 29, հաւաքեցին յեկեղեցին կղերիկոսքն և ժողովրդապետն. և եղեալ ի միջի զսուրբ Նշանն և սուրբ զԱւետարանն և նախ մատուցեալ նախ զպաղատանս առ սուրբ Հոգին, ընտրեցին ամենեքեան միաբան զմեզաւորս։ Զոր ընտրութիւնն և ես ապաւինեալ յաստուածային օգնութիւնն, և յաղօթս եղբայրութեան ձերոյ և ամենից սրբոց ընդունեցի։

Ահա զայս ինչ երիցս մինչև ցայսօր գրեցի սուրբ ժողովոյն և երկիցս սիրելութեան ձերում, որպէս զի և դուք հոգասջիք զմեզ աղօթիւք և գործով սատիպելով զասացեալ սուրբ ժողովն յայտնել մեզ փութով զկամս իւր. և վասն ձեռնադրութեանս ծանուցանել մեզ։ Եթէ ոք գտանեցիւր որ եկեալ առ մեզ ձեռնադրեցէր զմեզ, այլ լինէր յոյժ մեծ ողորմութիւն. բայց զայս ոչ կարծեմ կարելի։ Իսկ եթէ կամի զմեզ հրովարտակաւ իւրով առաքել յուրեք, մեք հնազանդ եմք ամենեւիմբ և ի կամաց նորա կախեալ եմք։

Դարձեալ խնդրեալ էի ի ձէնջ յայտնել մեզ եթէ կարելի է զմի ոք ի վարդապետաց ձերոց առաքել առ մեզ որ լիցի ընդ իս իբրև օգնական։ Դեռ եթէ կամք է, զի առաքեցիք առ ձեզ զերիտասարդ մի ընտրեալ, որ ի ձէնջ առաջնորդեալ ժամանակ մի դարձցի առ մեզ, հոգալով մեք վասն ծախուց նորա, զի մի լիցի ձեզ ծանրութիւն. և զայս յայտնեսջիք մեզ։ Վասն հասանելոյ զրգուկիս և վասն տպագրութեան նորա, մինչև ցայժմ սպասեմ պատասխանւոյդ։ Եւ յանձնելով զիս և զհամօրէն աստի եղեալ քահանայս հոգունակ սիրոյ ձերում, մնամ

Նուաստ ծառայ

1767 դեկտ. 16 Յոհաննէս վարդապետ Թասպազեան

ի մէրտին

ՄՀԷ.

Հետագայ թուղթը կը ցուցնէ թէ Կղզեկիս եկեղեցւոյն մէջ երգեհոն մը դնելու գաղափարը ե՛րբ, ինչպէս և որմէ՛ սկսեր է։ Բայց թէ ինչո՛ւ իրականացած չէ՝ անծանօթ կը մնայ ինձ։

Վերապատուելի տեառն տեառն Հայր Անդրեաս, և Հայր Դերսես վարդապետաց մերոց, ողջոյն յոյժ բազում սիրով և կարօտիւ։

... Յաջողութիւն մի յաջողեցաւ աստուծով չինել տալոյ եկեղեցւոյ մերում զերգեհոն մի ընտիր յոյժ և փառաւոր, որպէս երկնէաք ի բազմաց հետէ ի վերայ դրանն. և մի՛ ասիցէք թէ ոչ ունիմք հարկանող. զի և զայն եթէ տարակուսիք առաքեսցուք աստի, և եթէ ունկնդիր չունիմք ասիցէք, մեք եկեսցուք յունկնդրութիւն։ Արդ՝ քօռիէռով գրեցէք ինձ զպատասխանի թղթոյս վազվազակի, և թէ քանիով լինի յոյժ ընտիրն ամենայն զարդու և յօրինուածով իւրով իմացուցէք. և հրամանաւ Գերյարգելի աբբայ հօր մերոյ որպէս գրեալ եմ առ նա մի ըստ միոջէ, հաստատուն զրոյց արարէք թէ սկսանիմք զշինութիւնն, և ես աստի զծախսն աստուծով անվրէպ առաքեցից, զի հազար հինգ հարիւր ղուշ գրեթէ ի ձեռին իմում ունիմ, և քան զսոյն աւելի քան զերկու հարիւր ղուշի խօսք առեալ եմ. այլ եթէ յապաղիցէք զշինութիւնն ոչ լինի, զի տուօղն զգրամն կամի յաւուրս իւր պարգևել զեկեղեցւոյ զերգեհոնն ընտիր, և ոչ եթէ զծախս երգեհոնի, վասն այնորիկ եթէ դուք ոչ կամիցիք չինել անյապաղ, հարկաւորի տալ այլում, և ես դաշնադրեալ եմ ընդ նմա զի յորժամ սկսանելոց լինիցին զերգեհոնն, մեք յայնժամ առաքեսցուք զծախսն. վասն այնորիկ մի՛ յապաղէք, այլ վազվազակի ընդ առնուլ թղթոյս